X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. *ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:*

Ներկայացնենք և վերլուծենք մասնաճյուղի որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորենք մոտեցումը և արդյունավետությունը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ՈԱ ռազմավարությունը ձևակերպված է մասնաճյուղի ՌԾ-ի **1-ին ռազմավարական նպատակի խնդիր I բ-ում՝** «Ներդնել որակ ներքին ապահովման համակարգ՝ հավատարմագրման պետական չափանիշներին համապատասխան»: Այս խնդրի իրագործման համար ՌԾ-ում սահմանված են 8 նպատակներ, որոնք ներկայումս իրականացվում են: Դրանք նախատեսում են մասնաճյուղի ՈԱ նոր հայեցակարգի մշակում, ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթացի ներմուծում, կրթական ծրագրերի ՈԱ մեխանիզմների և ընթացակարգերի ընդլայնում, ուսանողների գնահատման արժանահավատ համակարգի օգտագործում, դասախոսական կազմի ՈԱ գործընթացների կատարելագործում, ուսումնառության ռեսուրսների և օժանդակ ծառայությունների որակի ապահովում: Ռազմավարությունը նախատեսում է **/ՌԾ. խնդիր 1բ, կետ 8/** ապահովել նաև ՈԱ գործընթացների թափանցիկությունն ու հրապարակայնությունը, ինչպես նաև ուսանողների, ներքին ու արտաքին շահեկիցների մասնակցությունը ՈԱ գործընթացներին մասնաճյուղում և հետադարձ կապ դրանց վերաբերյալ: Մասնաճյուղի կրթության որակի ապահովման առաջին հայեցակարգն ընդունվել է 2010թ.:

Սահմանելով կրթության որակի բնագավառում քաղաքականությունը՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ «Կրթության մասին» օրենքով, ԵՊՀ և իր կանոնադրություններով, ԵՊՀ Որակի ապահովման հայեցակարգի, ինչպես նաև Բոլոնիայի հռչակագրին անդամակցված երկրներին ուղղված Բեռլինի և Բերգենի կոմյունիկեներով, որտեղ կոչ է արվում ստեղծել ներդաշնակություն եվրոպական երկրների բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգերում: Այն համահունչ է ՀՀ կրթական քաղաքականության գլխավոր խնդրին՝ «ապահովել կրթության բարձր որակ՝ հիմքում պահպանելով նրա հիմնարարությունն ու համապատասխանությունը անհատի, հասարակության և պետության այժմեական և հեռանկարային պահանջներին»: Կրթության որակի բնագավառում մասնաճյուղի գործունեության նպատակն է՝ «ապահովել բուհի բարձր մրցունակությունը կրթական ծառայությունների շուկայում, զարգացնել ԵՊՀ ԻՄ-ի ներուժը կրթական և գիտական գործունեության ավանդական բնագավառներում»:

Արտահայտելով իր նվիրվածությունը որակի կառավարման սկզբունքներին, առաջնորդվելով Որակի ապահովման Եվրոպական ուղենիշներով և չափորոշիչներով (ԵՉՈՒ-ESG)՝ մասնաճյուղի ղեկավարությունը գիտակցում է, որ որակի ապահովման համակարգի մշակումը, ներդրումը և մշտական կատարելագործումը բուհի առաջնահերթ խնդիրներն են մոտակա ժամանակահատվածի համար: Այն կապահովի մասնաճյուղի մրցունակությունը և կայունությունը կրթական ծառայությունների շուկայում, գիտական և նորարարական

գործունեությունը, ֆինանսական ցուցանիշների աճը, հետևաբար բուհի աշխատակիցների և շահակից կողմերի բավարարվածությունը և վստահությունը ապագայի նկատմամբ:

Մասնաճյուղի ղեկավարությունը ապահովում է սույն քաղաքականությանը արդյունավետ իրականացումը, որը ներառում է կառավարման բոլոր աստիճանները: Մասնաճյուղի ղեկավարությունը և աշխատակիցները գիտակցում են, որ իրենց աշխատանքի որակից, արտաքին և ներքին շահակիցների բավարարվածությունից է կախված հաստատության բարօրությունը և նրա աշխատակիցների բարեկեցությունը:

ԵՊՀ ԻՄ-ում ԵՉՈՒ պահանջներին համահունչ Որակի ներքին համակարգը սկսվել է ներդրվել 2009թ., սակայն մասնաճյուղի ՈԱ առանձին մեխանիզմներ և ընթացակարգեր մինչ այդ էլ գործել են, ինչպես, օրինակ՝ կրթության որակից բավարարվածության ուսանողական հարցումները (2007թ.-ից), շրջանավարտների բավարարվածության հարցումները (2008թ.-ից), դասալսումները (մասնաճյուղի հիմնադրման օրվանից), գործունեության պլանավորումները և համապատասխան հաշվետվողականությունը և այլն: Մինչ այդ բացակայում էին ԵՉՈՒ-ի պահանջներին համապատասխան ՈԱ մի շարք կարևոր մեխանիզմներ և ընթացակարգեր, իսկ եղածներն ինտեգրված չէին ՈԱ մեկ ընդհանուր համակարգում: Այդ նպատակով՝ մասնաճյուղը հետևողական աշխատանք է տանում ԵՉՈՒ պահանջներին համահունչ ՈԱ համակարգ ստեղծելու համար:

Ներկայումս ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում արդեն գործում են ՈԱ մի շարք մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք նպատակաուղղված են մասնագիտության կրթական ծրագրերի, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ ու վարչական կազմի, ուսանողների գնահատման համակարգի և ուսումնառության ռեսուրսների որակի շարունակական բարելավմանը: Դրանք են.

1. Մասնաճյուղի բոլոր գործընթացների և ստորաբաժանումների աշխատանքների տարեկան պլանավորումները և ամենամյա հաշվետվությունները, որոնց միջոցով ապահովվում է մասնաճյուղի բոլոր գործընթացների հաշվետվողականությունը և թափանցիկությունը, վեր են հանվում թերությունները ու բացթողումները, մշակվում բարելավման ծրագրեր:
2. Կրթական ծրագրերի տարեկան մշտադիտարկումը և պարբերական վերանայումը, որոնց նպատակն է գնահատել ծրագրերի մատուցման որակը և համապատասխանությունը սահմանված նպատակներին, ինչպես նաև ծրագրի արդիականությունը ու շարունակական բարելավումը: Այս գործընթացների արդյունքը ծրագրի որակի բարելավման ուղղված միջոցառումների պլանի կազմումն ու իրականացումն է:
3. Մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումները (2008թ.-ից), որոնց միջոցով գնահատվում է կրթական ծրագրերի բովանդակությունից և ուսուցման մեթոդներից, ուսումնառության ռեսուրսներից և օժանդակ ուսանողական ծառայություններից, ուսումնական գործընթացի կազմակերպումից և ընդհանուր կրթական միջավայրից բավարարվածության մակարդակը: Արդյունքներն օգտագործվում են համապատասխան ոլորտների շարունակական բարելավման նպատակով:
4. ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների և պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների շրջանում անց կացվող հարցումները, որոնց միջոցով պարզաբանվում են արտաքին շահակիցների կարծիքը մասնաճյուղի շրջանավարտների և պրակտիկանտ ուսանողների մասնագիտական կոմպետեցիաների, ընդհանրական կարողությունների, թողարկող մասնագիտությունների պահանջվածության, նոր մասնագիտությունների

առաջարկությունների, աշխատաշուկայում մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ: Արդյունքները օգտագործվում են գործող մասնագիտության կրթական ծրագրերի բարելավման, նոր մասնագիտությունների բացման և այլ գործընթացներում:

5. Արտաքին շահակիցների հետ պարբերաբար կազմակերպվող հանդիպում-քննարկումները, որոնց ընթացքում քննարկվում են մասնագիտությունների ճշգրտման հարցեր, բացահայտվում մասնաճյուղի շրջանավարտների տեսական և գործնական պատրաստվածության վերաբերյալ խնդիրները: Արդյունքները օգտագործվում են մասնագիտության կրթական ծրագրերի վերանայման, նոր մասնագիտությունների բացման, նպատակային պրակտիկաների կազմակերպման, կուրսային և արվարտական աշխատանքների թեմատիկայի հաստատման և այլ գործընթացներում (2014թ.):
6. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում արտաքին շահակիցների մասնակցությունը ու նրանց շրջանում անցկացվող հարցումները, որոնց արդյունքները օգտագործվում են կրթական ծրագրերի վերանայման գործընթացում (2014թ.):
7. ԵՊՀ ԻՄ-ի կողմից կազմակերպվող պրակտիկատների կազմակերպման արդյունավետության գնահատման հարցումները (2015թ.):
8. ԵՊՀ ԻՄ-ում գործող գնահատման համակարգի վերաբերյալ դասախոսների և ուսանողների շրջանում անց կացվող հարցումները:
9. Դասավանդման արդյունավետության և որակի վերաբերյալ ուսանողական հարցումները (2007թ.-ից), որոնց օգնությամբ գնահատվում են դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակները, ինչպես նաև առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների մատուցման որակը: Այս հարցման միջոցով ուսանողները գնահատում են նաև իրենց ֆակուլտետի դեկանի, դեկանի տեղակալի, դեկանատի գործավարների, ուսումնական խորհրդատուների աշխատանքները: Արդյունքներն օգտագործվում են բարելավող միջոցառումների մշակման և իրականացման համար, ինչպես նաև հիմնական դասախոսական կազմի ընտրության, վերապատրաստումների, առաջքաշման և պարգևատրման գործընթացներում:
10. Դասալսումները, որոնց արդյունքները միտված են ուսումնառության պրոցեսի կատարելագործմանը, դասավանդման որակի բարելավմանը:
11. Դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրերը (2011թ.-ից), որոնք նպատակաուղղված են դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական հմտությունների բարելավմանը:
12. ԵՊՀ ԻՄ-ից ուսանողների ու պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի բավարարվածության ուսումնասիրության հարցումները, որոնց միջոցով ուսումնառողները և աշխատակիները գնահատում են իրենց բավարարվածությունը մասնաճյուղի ռեսուրսներից ու ծառայություններից, ստորաբաժանումների աշխատանքներից, հանդես գալիս մասնաճյուղի գործունեության բարելավման առաջարկություններով: Արդյունքներն օգտագործվում են համապատասխան ոլորտների շարունակական բարելավման նպատակով:

ՈԱ վերոնշյալ մեխանիզմներն ու ընթացակարգերը պաշտոնապես հաստատված են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ԳԽ կողմից, հրատարակվել և բաժանվել են մասնաճյուղի բոլոր ուսումնական և վարչական կառույցներին, իսկ արտաքին շահեկիցներին և լայն հանրությանը հասանելի դարձնելու նպատակով տեղադրված են մասնաճյուղի պաշտոնական կայք էջում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. *Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:*

Վերլուծենք որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրվող ժամանակային, մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետությունը և հիմնավորենք մոտեցումը:

Դեռևս 2009թ. դեկտեմբերի 17-ից մասնաճյուղում գործում էր Որակի ապահովման և վերահսկման հանձնաժողով, որտեղ ներգրավված էին մասնաճյուղի տարբեր ստորաբաժանման աշխատակիցներ ու ուսանողներ: Այս հանձնաժողովի հիմնական գործառույթներն էին՝ ՈԱ գործընթացների կազմակերպումը, իրականացումն ու վերահսկողությունը: 2010թ. սեպտեմբերի 1-ին հանձնաժողովը վերանվանվեց Որակի կառավարման հանձնաժողովի, որը ԵՊՀ ԻՄ որակի ապահովման գործընթացները կառավարող մարմին է, նրա հիմնական նպատակը մասնաճյուղում որակի մշակույթի ձևավորումն ու զարգացումն է, որակի ընդհանրական կառավարման (TQM) մոդելի ներդնումը, կրթական համակարգի բարելավումը և աստիճանական համապատասխանեցումը հավատարմագրման պետական չափանիշների պահանջներին, որակի ապահովման ոլորտում ՌԾ-ից բխող խնդիրների լուծման կազմակերպումը:

2011թ. սկսած մասնաճյուղում Ուսումնամեթոդական վարչության կազմում գործում է Կրթության որակի ապահովման և գնահատման բաժինը՝ իր համապատասխան աշխատակիցներով: 2014թ. հունվարի 14-ից ԿՈԱԳ բաժինը, դուրս գալով ՈՒՄՎ-ի կազմից, ձևավորվեց որպես առանձին՝ Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին: Բաժինը ԵՊՀ ԻՄ-ի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որի հիմնական նպատակը ԵՉՈՒ պահանջներին համապատասխան մասնաճյուղում որակի ներքին ապահովման մեխանիզմների մշակումը և գործադրումը, որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումը և կրթական ծառայությունների շուկայում բուհի բարձր մրցակցության ապահովումն է (ԵՊՀ ԻՄ-ի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կանոնակարգ, 27.01.2014թ., Գիտական խորհուրդ): Բաժինն ունի 4 հաստիք, որոնց աշխատանքային պարտականությունները սահմանված են, առանձին աշխատասենյակ, կահավորված և ապահովված է ժամանակակից տեխնիկայով:

ՄԿՈԱ բաժինը ինքնակառավարվող մարմին է և իր որոշումները ընդունում է գիտխորհրդի հաստատած կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում: Բաժինը կազմում է քննարկվող հարցերի շրջանակը՝ հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ-ի որակի ապահովման հաստատված քաղաքականության հիմնադրույթները: Նրա որոշումները և գործողությունները վարչական և կառավարման մարմինների կողմից չեն ուղղորդվում և կարգավորվում:

Բացի հաստիքային աշխատակիցներից ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը իրականացնելու համար մասնաճյուղի տնօրենի հրամանով ձևավորվել է աշխատանքային խումբ, որտեղ ներգրավված են մասնաճյուղի տարբեր ստորաբաժանումների աշխատակիցներ ու ուսանողներ: Աշխատանքային խումբը գործում է հասարակական հիմունքներով, սակայն կատարած աշխատանքների համար նրանք պարբերաբար խրախուսվում են:

Մասնաճյուղը ներքին և արտաքին շահակիցների շրջանում տարաբնույթ հարցումների նախապատրաստման, անցկացման, արդյունքների մշակման ու ամփոփման աշխատանքների համար հատկացնում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Մասնաճյուղի որակի ներքին ապահովման գործընթացներն արդյունավետ իրականացնելու համար ՄԿՈԱ բաժնի աշխատակիցները գործուղվում են ՈԱԱԿ կազմակերպած վերապատրաստումներին մասնակցելու համար: Մասնաճյուղի 6 աշխատակիցներ 2013-14 թթ. մասնակցել են «Մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգերի մշակում և բարելավում» թեմայով եռափուլ դասընթացներին: ՄԿՈԱ բաժնի 3 աշխատակիցներ այդ դասընթացներին ակտիվ մասնակցելու համար 2014թ. դեկտեմբերին ստացել են Որակի ապահովման գործընթացի աջակցի հավաստագիր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. *Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:*

Ներկայացնենք որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը, վերլուծենք արդյունավետությունը և հիմնավորենք մոտեցումը:

ՈԱ բոլոր վերոնշյալ գործընթացներում որոշակի դերակատարություն է վերապահված նաև ներքին (ուսանողներ, դասախոսներ) և արտաքին (շրջանավարտներ, գործատուների ներկայացուցիչներ, արտաքին գնահատողներ և այլն) շահակիցների համար:

Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են մասնաճյուղի ԳԽ-ում և ֆակուլտետների խորհուրդներում, Գիտական խորհրդին կից որակի կառավարման հանձնաժողովում, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում, ինչպես նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ինստիտուցիոնալ ինքնագնահատման աշխատանքային խմբի կազմում: Ուսանողներն ակտիվորեն մասնակցում են մասնաճյուղի կողմից իրականացվող տարաբնույթ հարցումների՝ ինչպես հարցաշարերի մշակման, այնպես էլ հարցումների անցկացման գործընթացին:

ՄԿՈԱ բաժնի աշխատանքներին աջակցելու համար ևս ձևավորվել է ուսանողական խումբ:

2015թ. օգոստոսի 31-ից մասնաճյուղում նշանակվել են նաև կառուցվածքային ստորաբաժանումների լիազոր-ներկայացուցիչներ՝ իրենց 5 անդամներից բաղկացած աշխատանքային խմբով, յուրաքանչյուր խմբում երկուական ուսանողներ:

Պարբերաբար տեղի են ունենում հանդիպումներ մարզի հիմնական գործատուներին հետ:

Մասնաճյուղում գործող մասնագիտությունների, նոր մասնագիտությունների բացման, կրթական ծրագրերի մշտադիտարկման, պրոֆեսորադասախոսական անձնակազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման, դասախոսների ընտրության, աշխատանքի ընդունման, հեռացման, դասախոսների առաջքաշման, ուսանողների և աշխատակիցների մասնաճյուղից բավարարվածության գործընթացներում մեծապես օգտագործվում են արտաքին և ներքին շահակիցների շրջանում անց կացվող հարցումների արդյունքները:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ մասնաճյուղի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են բուհի հիմնական գործընթացներում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. *Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:*

Վերլուծել որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմների արդյունավետությունը և հիմնավորենք մոտեցումը:

Մասնաճյուղը կարևորում է որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայումը, սակայն քանի որ համակարգը ներդրման փուլում է՝ վերանայման հստակ

մեխանիզմներ դեռևս մշակված չեն: ՄԿՈԱ բաժինն նախատեսում է մշակել վերանայման համապատասխան մեխանիզմներ ու ընթացակարգեր:

Ներկայացնենք այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով մասնաճյուղը կատարել է որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):

Ներկայացնենք այն կազմակերպությունների ցանկը, որոնց օրինակով մասնաճյուղը կատարել է որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ.

- *Երևանի պետական համալսարան*
- *Մոսկվայի պետական համալսարան*
- *Երևանի պետական տնտեսագիտական համալսարան*
- *Վանաձորի "Մխիթար Գոշ" հայ-ռուսական միջազգային համալսարան*
- *Վլադիմիրի պետական համալսարան (ՌԴ)*
- *Տվերի պետական համալսարան (ՌԴ)*
- *ՈՒդմուրտական պետական համալսարան (ՌԴ)*
- *ՈՒրալի պետական մանկավարժական համալսարան (ՌԴ)*

ՉԱՓՈՐՈՇԻՉ է. *Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:*

Հիմնավորենք տրամադրված հիմքերի հավաստիությունը և մոտեցման արդյունավետությունը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունն իրականացնելու համար օգտվել ենք մասնաճյուղի Գիտական խորհրդի կողմից հաստատված փաստաթղթային փաթեթից, որակի ներքին ապահովման գնահատման մեխանիզմներից ստացված վերլուծությունից: Ցուցաբերել ենք վերլուծական մոտեցում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. *Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:*

Վերլուծենք մասնաճյուղի գործունեության թափանցիկությունն ապահովող մեխանիզմների արդյունավետությունը:

Համաձայն՝ **<u>ՌԾ-ի</u> 1.բ խնդրի** /Ներդնել որակի ներքին ապահովման համակարգ՝ հավատարմագրման պետական չափանիշներին համապատասխան/ մասնաճյուղը սահմանում է «Ապահովել որակի ներքին գնահատման չափանիշների և ինքնագնահատման գործընթացի ու համապատասխան զեկույցի թափանցիկությունը և հրապարակայնությունը համալսարանի ներքին և արտաքին շահեկիցների համար, ուսանողների մասնակցությունը և հետադարձ կապը որակի գնահատման գործընթացներում»:

Ռազմավարական այս խնդիրը իրականացնելու համար ձևավորվել է մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունն իրականացնող խումբ ինքնագնահատումն իրականացնող աշխատանքային խումբ, որի աշխատանքները Ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթացը եզրափակվելու են համապատասխան վերլուծական զեկույցների պատրաստմամբ:

ՈԱ արտաքին գործընթացներին էապես նպաստում է նաև մասնաճյուղում երկար տարիներ գործող «վարից-վեր» հաշվետվողականության համակարգը, որը ներառում է ֆակուլտետների և այլ ստորաբաժանումների տարեկան հաշվետվություններն իրենց գործունեության արդյունքների վերաբերյալ և մասնաճյուղի գործունեության վերաբերյալ տնօրենի ամենամյա հաշվետվությունը (որը հրատարակվում և տարածվում է մասնաճյուղում և նրա սահմաններից դուրս): Կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ ՈԱ գործընթացներին առնչվող բոլոր պաշտոնական փաստաթղթերը հրապարակվում և տարածվում են ԵՊՀ մասնաճյուղի ստորաբաժանումներում, ինչպես նաև տեղադրվում են մասնաճյուղի կայքէջում:

Ներքին և արտաքին շահեկիցների համար մասնաճյուղի գործունեության թափանցիկությունն ապահովելու համար կարևոր է նրանց տեղեկացվածությունն ապահովող համակարգերի առկայությունը: Այդ նպատակով մասնաճյուղում գործադրված են ներքին տեղեկատվության մի շարք մեխանիզմներ, որոնցից են.

1. ԵՊՀ գործունեության արդյունքների վերաբերյալ ամենամյա հաշվետվությունը, որտեղ ամփոփվում են նաև մասնաճյուղի անցնող ուստարում ուսումնական, գիտա-հետազոտական ու վարչական կառույցների գործունեության հիմնական արդյունքները:
2. ԵՊՀ ռեկտորի ամենամյա զեկույցը Համալսարանի խորհրդին, որտեղ ամփոփվում են ինչպես Մայր բուհի, այնպես էլ մասնաճյուղի նախորդ ուսումնական տարվա գործունեության արդյունքները՝ ըստ Ռազմավարական ծրագրի կատարողականի:
3. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի ամենամյա զեկույցը Համալսարանի խորհրդին և Մասնաճյուղի գիտական խորհրդին, որտեղ ամփոփվում են մասնաճյուղի նախորդ ուստարվա գործունեության արդյունքները՝ ըստ Ռազմավարական ծրագրի կատարողականի:
4. Մասնաճյուղի ֆակուլտետների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները մասնաճյուղի ղեկավարությանը:
5. Մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմը, որը պարբերաբար հրատարակվում է և նպատակ ունի քանակական ցուցանիշների օգնությամբ ներկայացնել մասնաճյուղի գործունեության արդյունքները և «առողջական» վիճակը վերջին 5 տարիների համար և տրամադրել հենանիշեր ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ՌԾ-ի իրականացման մշտադիտարկման համար:
6. Ներքին և արտաքին շահակիցների շրջանում անց կացվող տարաբնույթ հարցումների արդյունքների ամենամյա հաշվետվությունները, որոնք ներկայացվում են Մասնաճյուղի Գիտական խորհրդի քննարկմանը:
7. Ուսանողների առաջադիմության և շարժի, ինչպես նաև ուսումնական այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունն ապահովող “Supervision” ավտոմատացված էլեկտրոնային համակարգը, որը մատչելի է դարձնում ուսումնական գործընթացին առնչվող տվյալների մեծածավալ բազան: Ուսանողների առաջադիմության ամփոփ ձևերը ևս տեղադրվում են մասնաճյուղի կայքէջում:
8. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և դասընթացների տեղեկագիրքը, որը 2008թ.-ից ամեն տարի հրատարակվում և հասանելի է դարձվում ուսանողներին և ներքին ու արտաքին այլ շահեկիցներին՝ տպագրված, էլեկտրոնային և առցանց տարբերակներով: Այն ամբողջական տեղեկատվություն է տրամադրում ԵՊՀ ԻՄ-ում ուսման կազմակերպման, կրթական ծրագրերի ու առանձին դասընթացների վերաբերյալ:

9. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կայքէջում տեղադրվող տեղեկատվությունը, որն առնչվում է ներքին գործընթացներին և կանոնակարգային դաշտին: Այն հնարավորություն է տալիս ուսանողներին, ապագա դիմորդներին և այլ արտաքին շահեկիցներին՝ ծանոթանալու մասնաճյուղի և նրա տրամադրած կրթական և գիտական ծառայությունների հետ: Կայքէջն ապահովում է նաև հետադարձ կապի (հարց ու պատասխանի) հնարավորություն:
10. Ուսանողական համակազմի վերաբերյալ քանակական և որակական տվյալների և ուսանողների առաջադիմության ցուցանիշների կանոնավոր հավաքագրումը, վերլուծությունը և հրապարակումը:
11. Ֆակուլտետների ուսումնական և գիտահետազոտական գործունեության գնահատման նպատակով պարբերաբար իրականացվող ներքին ստուգումների արդյունքները, որոնք քննարկվում են ֆակուլտետի, այնուհետև մասնաճյուղի ԳԽ-ում և տրվում են համապատասխան հանձնարարականներ՝ բարելավող գործողությունների իրականացման համար:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ մասնաճյուղը դեռևս չունի միասնական կենտրոնացված տեղեկատվական համակարգ՝ տվյալների մեկ ընդհանուր բազայով: Մասնաճյուղի համար այն հանդիսանում է ռազմավարական խնդիր, ինչն արտացոլված է մասնաճյուղի ՌԾ-ում /ՌԾ. **խնդիր V.բ**/՝«Ստեղծել մասնաճյուղի միասնական կենտրոնական տեղեկատվական համակարգ և ապահովել նրա մատչելիությունը ուսանողների և աշխատողների համար»: Այս խնդրի իրագործման համար ՌԾ-ում նախատեսված են նաև կոնկրետ քայլեր:

Չափանիշ 10-ի վերաբերյալ ներկայացնել վերջին 3 տարվա SWOT վերլուծություն:

Ուժեղ կողմեր (Strengths)	**Հնարավորություններ (Opportunities)**
1. Որակի ապահովման ոլորտին առնչվող ռազմավարական նպատակների և խնդիրների սահմանումը Մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրում 2. Որակի ապահովման կառույցի առկայությունը և տեխնիկապես հագեցվածությունը 3. Կրթության որակի բնագավառում մասնաճյուղի քաղաքականության առկայությունը 4. ԵՊՀ ԻՄ-ի Գնահատման առանցքային ցուցանիշների առկայությունը 5. Կառուցվածքային ստորաբաժանումներում լիազոր-ներկայացուցիչների աշխատանքային խմբի առկայությունը 6. Մասնաճյուղում ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծությունը իրականացնող աշխատանքային խմբի առկայությունը 7. Որակի ապահովման մշակված մեխանիզմների և գործիքների առկայությունը 8. Որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը 9. Մասնաճյուղի աշխատակիցների մասնակցությունը ՈԱԱԿ-ի կողմից պարբերաբար կազմակերպվող վերապատրաստումներին 10. Մասնաճյուղի մասնակցությունը ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված փորձնական հավատարմագրմանը (2011թ., 2013թ.) 11. Մասնաճյուղի գործունեության և որակի ապահովման գործընթացների թափանցիկությունը	1. Որակի ապահովման ազգային կենտրոնի հետ ակտիվ համագործակցություն 2. Որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգի ուղղությամբ Մայր բուհի աջակցությունը 3. Մայր բուհի Որակի ապահովման կենտրոնի հետ համագործակցությունը
Թույլ կողմեր (Weaknesses)	**Վտանգներ (Threats)**
1. Որակի ապահովման և հետադարձ կապերի որոշ մեխանիզմների անկատարությունը 2. Աշխատանքային խմբի հասարակական հիմունքներով աշխատելը 3. Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող ֆինանսական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերի բացակայություն 4. Որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգի անկատարությունը 5. Որակի ապահովման գործընթացներում մասնաճյուղի ստորաբաժանումների ոչ լիարժեք ներգրավվածությունը 6. ԿՈԱԳ բաժնի Ուսումնամեթոդական վարչության ենթակառուցվածք լինելը 7. Որակի ապահովման ձեռնարկի բացակայությունը 8. Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականության բացակայությունը	1. Ֆինանսական մուտքերի նվազումը 2. Արտաքին շահակիցների կողմից որակի ապահովման գործընթացների նկատմամբ անտարբերությունը 3. Այլ բուհերի կողմից համագործակցության պասիվ դիրքորոշումը 4. Որակյալ կադրերի պակասությունը

Ինչպես պետական և կրթության ոլորտի կառավարման մարմինների, այնպես էլ հասարակության կողմից առանձնահատուկ ուշադրության է արժանանում մասնագիտական կրթության որակի ապահովումը: Բնականաբար, մասնաճյուղը անմասն չի մնում նշված գործընթացից, որի բարելավման համար նախատեսվում է.

- վերանայել և բարելավել որակի ապահովման մեխանիզմները և ընթացակարգերը
- ներգրավել որակի ապահովման գործընթացում մասնաճյուղի ներքին շահակիցներին,
- ձևավորել արտաքին շահակիցների հետ կայուն հետադարձ կապի մեխանիզմներ,
- մշակել որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող ֆինանսական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը,
- մշակել և հրատարակել որակի ապահովման ներքին համակարգի ձեռնարկ,
- մշակել որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն
- ինքնավերլուծության հիման վրա վերանայել որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացները: